

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

### ՎԱՐԴԱՆ ԽԱՎԱՏՐՅԱՆ

Հիսուս Քրիստոսի պատմական դերակատարության հզորագույն լիցքը հիմք դրեց քրիստոնեություն համահասարակական շարժմանը մերձավոր արևելյան տարածաշրջանում և երկու սերունդի կյանքի ընթացքում վերածվեց համահոռմեական կրոնական համակարգի: Նշենք, որ վաղ քրիստոնեություն հետագոտողները պնդում են, որ քրիստոնեությունն ի հայտ է եկել, որպես աղանդ հուղղայականության ներսում: Եթե ընդունենք այս պնդումը որպես ծամարտություն պետք է հիմնավորենք, որ Հիսուսի երկրային կյանքին հաջորդած տասնամյակներում ձևավորված քրիստոնեական համայնքների անդամները բացառապես կամ ամենաքիչը ճնշող մեծամասնությամբ պետք է լինեին հրեաներ: Սակայն այդ տարիներին առաքյալների և Պողոսի գործունեության կողմնորոշումը դեպի արտերկիր որևէ կերպ չի հարմարվում այդ տեսակետի հետ: Հրեականության մեջ գործող աղանդի կողմնորոշումը վաղ շրջանում պետք է լինի հրեական շրջանակում կայանալու և ուժեղանալու ձգտումը, մինչդեռ այստեղ մենք ոչ միայն ականատեսն ենք արտերկրյա քաղաքականության գերակա ուժագծի, այլև պարզորոշ տեսնում ենք քրիստոնեական շարժման ներսում գոյություն ունեցող հուղղայականության հետ կապերը պահպանելու, կողմնակից գործիչների հայացքների վերանայումը շարժման կողմից: Սա մեր կարծիքով խոսում է այն մասին, որ անգամ իսրայելի տարածքում վաղ շրջանի համայնքների անդամակազմի հիմնական զանգվածը ոչ հրեադավաններն էին, իսկ ազգային պատկանելության առումով համայնքները, ունեին իսայտաբղետ կազմ: Քրիստոնեությունը իր ծագման փուլում կազմված էր հավատացյալների փոքր համայնքներից, որոնք զգալիորեն, բայց ոչ բացառապես հրեածագում էին արդեն ձևավորման շրջանում<sup>1</sup>: Նշենք, որ իսրայելի սահմաններից դուրս քարոզչության ուժեղացման հետևանքով հրեածագում զանգվածի համեմատ այլ ժողովուրդների բազմագույն զանգվածը ոչ միայն իր քանակով, այլև իր հասարակական աղղեցության աստիճանով էապես գերազանցում է հրեածագումներին: «Իսրայելում, որտեղ քրիստոնեությունը ամրապնդեց իր գիրքերը մինչև մ.թ. 70 թ., համայնքները հիմնականում բաղկացած էին գյուղական վայրերի բնակիչներից, իսկ արտերկրում քրիստոնեությունը ընդունած զանգվածը

<sup>1</sup> The HarperCollins Dictionary of Religion, San Francisco, 1995, p. 240.

պատկանում էր քաղաքացիների միջին խավին<sup>1</sup>: Վաղ շրջանի քարոզչական փուլում քրիստոնեությանը յուրահատուկ է պայմաններում՝ համոզված Հիսուս Քրիստոսի մոտալուտ վերադարձի, ահեղ դատաստանի և սեփական հոգիների փրկության մեջ:

Ետք քրիստոնեական վաղ փուլը դիտարկելիս՝ պարզորոշ է երեսում, որ նոր ձևավորվող կրոնը բացառիկ արագությամբ տարածվում էր արտերկրում: Անվիճելի է, որ քրիստոնեությանը քարոզչությունը Խորայելից դուրս որպես բազգա օգտագործում էր մերձավոր արևելքով մեկ տարածված հրեական սփյուռքը, սակայն հետեւորդների մեջ գնալով ավելի ու ավելի մեծամասնություն էր դառնում ոչ հրեածագում դավանորդների թիվը: Քանի որ ամեն զատկի Հիսուսի խաչելության տոնակատարության ժամանակ քրիստոնյա ունիտավորների զգալի թիվ էր այցելում Երուսաղեմ և մասնակցում «միասնական հացկերույթների արարողություններին»: Վերը բերված քանակական շարժը փաստորեն պարզորոշ կերպով երեսում էր և իր տրամաբանական դրսեորմանը հասավ առաքյալների կողմից հեղինակած քրիստոնեությամբ համայնքի ղեկավար շրջանում իրականացված նոր կազմակերպական փոփոխությունների մեջ «արդ, եղբայրներ, ձեզանից յոթը վկայված մարդիկ ընտրեցեք, Սուրբ Հոգով և իմաստությունով լցված, ուրոնց այս պիտույքի վրա դնենք, իսկ մենք աղոթքին և խոսքի պաշտամունքին հետեւենք և այս խոսքը բոլոր բազմության առաջ դրեցին և ընտրեցին Ստեփանոսին, որ Սուրբ Հոգով և հավատքով լցված մարդ էր և Փիլիպպոսին և Պրոքոնովին և Նիկանովային և Տիմովնային և Պարմենային և անտիռքացի նորահավատ Նիկողայոսին»<sup>2</sup>: Փաստենք, որ բոլոր յոթ անունները հելլենական են, իսկ նրանցից վերջինն ուղղակի խոսում է այն մասին, որ նա ազգությամբ հույն է: Փաստորեն առաքյալների որոշումը վերը նշված քանակական անցումների որակական դրսեորումն է<sup>3</sup>, հակառակ դեպքում այն բավական տարօրինակ է<sup>3</sup>: Նորընտիրների ինքնամուաց, անձնուրաց քարոզչությունը նոր շունչ հաղորդեց քրիստոնեությանը շարժմանը Երուսաղեմում, որտեղից դեպի մերձավոր արևելքի բոլոր ծագերը ճառագայթեց սուրբ Ստեփանոս Նախավկայի անձնվեր քարոզչության գլխավոր հեղափոխական հիմնադրույթը՝ հրեաց օրենքը չպետք է Հիսուսի ուսանածից վեր լինի: Զնայած նրան, որ. «Ստեփանոսն էլ հավատքով և զորությունով լցված մեծ հրաշքներ և նշաններ էր անում ժողովրդի մեջ»<sup>4</sup>, վերջինիս ձերբակալեցին, տարան սինեղրիոնի դատին և Երուսաղեմի քա-

<sup>1</sup> Религиозные традиции мира, том I, М., Кронпресс , 1996, ст. 368.

<sup>2</sup> Գործ Առաքելոց 6:2-6.

<sup>3</sup> Ալեք Դեկո, Առոտու Պավել, Մ., 2009, ստ. 46.

<sup>4</sup> Գործ Առաքելոց 6:8.

դաքային ուրվագծից դուրս բերելով, քարածեծ արեցին ու սպանեցին։ Սուրբ Ստեփանոսի եղերական մահը Երուսաղեմի Հրեաց հուղաբանական բազմության կողմից քրիստոնյաների դեմ զանգվածային բռնությունների խթան դարձավ։ Քրիստոնյաներին փողոցներում որսալը և ինքնաղատաստանի ենթարկելը այնպիսի համատարած բնույթ էր կրում, որ վերահսկողությունից դուրս եկած իրավիճակը մեղմելու համար օկուպացիոն հռոմեական իշխանությունները ստիպված էին բաց թողնել քաղաքային դարպասները՝ քրիստոնեաղավան տարրի Սուրբ քաղաքից անկաշկանդ հեռանալը ապահովելու համար։ Հալածանքները այնքան խիստ էին, որ փախչողները մուտք գործեցին անգամ Սամարեթիա՝ տարածք, որը դիտվում էր այն աստիճան պիղծ, որ Հրեաների համար այդ երկրի ջուրը աղտոտ էր խոզի արյունից։ Նշված քրիստոնեության պատմության ամենավաղ շրջանի այս իրադարձությունները խոսուն ապացույց են քրիստոնեականության և հուղարայականության միջև ձեւափորված անլուծելի հակասությունների դաշտի, որի անհամատեղելիությունը պարզորոշ երևում է զանգվածային թշնամնքի ու ոտնձգության ակտերի մեջ արդեն ամենավաղ շերտում։ Մեր կարծիքով այստեղ սկիզբ առած փոխադարձ օտարումը գնալով ավելի ու ավելի է խորանում հաջորդ դարերի ընթացքում։ Նշենք, որ Երուսաղեմում տեղ գտած հալածանքները շրջանցեցին առաքյալներին, քանի որ սինեղրիոնը նրանց համարում էր Հրեադավան և ոչ վտանգավոր։ Թերևս դա բացատրվում էր քրիստոնյաների մեջ Հրեական ծիսակատարությունների զգալի բաժնի պահպանմամբ (թլպատում, եռակի աղոթք Երուսաղեմի գլխավոր տաճարում և այլն)։ Քրիստոնեական համայնքի արտերկրյա քարոզչության կտրուկ ուժեղացումը և լոկալ կրոնական ուղղությունից համահոռմեական կրոնագաղափարական գործոնի վերածվելը էապես պայմանավորված է այնպիսի խոշորագույն պատմական կերպարի գործունեությամբ, ինչպիսին Սավուղ Պողոսն է։ Այս անձնավորությունը, թե՛ իր գործունեության և թե՛ իր ուսմունքի շարադրման տեսակետից բացառիկ կոնտրաստային է և ծայրահեղական։ Նվիրելականության բարձրագույն մակարդակում իրականացրած իր քարոզչությունը Պողոսին բերեց բազմիցս մտրակահարում, քարածեծ լինելու և հրաշքով մահվանից փրկվելու հասարակական մահապատժի փորձ և որպես մարտիրոսական կյանքի եղերական ավարտ հրապարակային մահապատիժ գլխատում, իսկ քրիստոնեությանը բերեց քրիստոնեությունից հուղաբականության բնածին հետքերի վերացման, համահոռմեական ինքնիշխան կրոնի կարգավիճակ, Հռոմ մայրաքաղաքում ամուր սոցիալական հենքով համայնքի ստեղծում և վերագգային եկեղեցու ճյուղավորված աննախադեպ կառույցի հաստատում։ Իսկապես Պողոսը «...մարդ է, ով մարտահրավեր է նետում չափի

մասին բոլոր ընկալումներին։ Նա հանճարեղորեն մարդկանց բերում էր քրիստոնեից հավատի։ Նրան կարելի է կոչել քրիստոնեության ճարտարապետ։ Պողոսն էր, որ հասկացավ, որ քրիստոնեության ապագան հեթանոսներին դիմելու մեջ է...»<sup>1</sup>

Այս նախաղեպը չունեցող հզորագույն շարժումը աստիճանաբար ըյուրեղացավ որպես քրիստոնեական համակարգ բաղկացած տարածաշրջանային լիդերներից, հեղինակություն վայելող թափառող անձնուրաց քարոզիչներից և սեփական դավանանքի ճշմարտության մեջ համոզված շարքային հավատացյալների զգալի քանակից։ Հետ էության տվյալ ժամանակաշրջանում քրիստոնեությունը դարձավ հասարակության քաղաքացիական հատվածի առավել ազդեցիկ կրոնը։ Գրեթե նույն ժամանակահատվածում մ.թ. I դար նշենք, որ փոքրասիական տարածքներից հռոմեական իրականություն մուտք գործած զորեղ և ազդեցիկ միհրականությունը մոտավորապես նույն ժամանակահատվածի ընթացքում դարձավ դոմինանտ հռոմեական բանակում։ Ինչպես նշել ենք մեր աշխատության առաջին գլխում, սույն ժամանակաշրջանը հոգեսոր ու քաղաքական որոնումների հատված է, որը պահանջը ուներ ամբողջացնող համահռոմեական գաղափարաբանության և անխուսափելի էր, որ այդ գերակատարությունը ստանձնելու համար պայքարում միմյանց հետ առճակատման էին գալու քաղաքացիական հասարակությունը (կամ քաղաքային միջին խավը ներկայացնող քրիստոնեությունը) և ուղղմական դասի գլխավոր կրոնական համակարգը՝ միհրականությունը։ Թերեւ այս առճակատման հետեանքներն էին քրիստոնյաների դեմ հալածանքները, որոնք տեղ գտան ներոն՝ 64 թ., Դոմեցիանոս 90-ական թթ. կայսրերի օրոք Հռոմում և Փոքր Ասիայում, իսկ Տրայանոսի օրոք 111-113 թթ. օրենքով արգելեց քրիստոնյա լինելը։ Մետահանում Սեվերը 201 թ. օրենքով արգելեց քաղաքացիների հուղդայականություն և քրիստոնեություն ընդունելը։ III դ. 2-րդ կեսին բարբարոսների պատերազմական ճնշումների հետևանքով Հռոմի կայսիրերը վարում էին հասարակության կոնսոլիդացման քաղաքականություն, ինչը ենթադրում էր Հռոմեական աստվածների ինչպես և կայսրի պաշտամունքի ուժեղացում, որն ըստ հաշվարկի պետք է բուռն հայրենասիրական ալիք առաջացներ։ Այդ իսկ պատճառով Հռոմեական իշխանությունների կողմից թշնամաբար ընդունվեց այս ծրագրին կայսրության ամենազորեղ կրոններից մեկի՝ քրիստոնեության դիմադրությունը։ Դեցիուս 250-251 թթ. և Վալերիանոս՝ 257-258 թթ. կայսրերի օրոք տեղ գտան զանգվածային հաւածանքներ քրիստոնյաների դեմ, որոնք իրենց գագաթնակետին հասան

<sup>1</sup> Ալեն Դեկո, Առոտոլ Պավել, Մ., 2009, ստ. 13.

Դիոկղետիանոս և Գալերիոս կայսրերի օրոք 303-313թ.թ.: Նշենք, որ այս հալածանքների մեջ գլխավոր դերակատարությունը իրականացնում էր Հռոմեական բանակը: Փաստենք, որ քրիստոնեական եկեղեցին որպես համակարգ արդեն լ դարում ուներ բարձր մակարդակի հասած դիմադրունակություն և դա էր պատճառը, որ գնալով ավելի ու ավելի խիստ դարձող և զանգվածային հալածանքները ոչ միայն չփլուզեցին եկեղեցին, այլև «եկեղեցին հասցրեց ամրանալ այնքան, որ միասնական պետական պաշտամունքի իրականացումը դարձավ անհնարին»<sup>1</sup>: Նշենք, որ քրիստոնեական եկեղեցին առաջին երեք դարերի ընթացքում վարել է միացյալ պայքարի ճկուն քաղաքականություն: Քրիստոնյաները իրականացրել են ժամանակաշրջանի համար ամենալայնածավալ և աննախադեպ սոցիալական ծրագրերը, որոնք հանգեցրել են ինչպես առանձին վերցրած քրիստոնյաների ու առանձին համայնքների, այնպես էլ կրոնի հասարակական համարումի բարձրացմանը, որպես օրինակ բերենք, որ III դ. «Հռոմի քրիստոնեական եկեղեցին ուներ տարբեր աստիճանների 155 եկեղեցական ծառայողներ և առավել քան 1500 այրիներ, անդամալույծներ և կարիքավորներ»: Նշենք, որ քրիստոնեից եկեղեցու սոցիալական գործառությունների մեջ առանցքային դեր էին խաղում այցելությունները և օգնությունները կալանավայրերին, ինչպես և ծանրագույն հիվանդություններով տառապող մարդկանց խնամքը: Նշված ծրագրերը իհարկե խստագույնս նպաստում էին քրիստոնեից եկեղեցու հասարակական համարման աճին և քրիստոնեական համայնքի քանակական բազմապատկմանը: Փաստենք, որ քրիստոնեական համայնքի ճնշող թվաքանակը կազմում էին քաղաքային բնակչության գրագետ միջին խավերը: Քրիստոնեության ժողովրդայնության և հոգեոր վերելքի գործում բացառիկ դեր խաղաց նաև II դ. Աֆրիկայում (ղպտիական շրջանակներում) սկիզբ առած անհատ ճգնակյացների շարժումը, որը առավել ուշ վերածվեց վանական շարժման: II-III դդ. ճգնակյացները մարդիկ էին, որոնք բացառիկ նվիրմամբ Հիսուսի հանդեպ փորձում էին գերազանցել մարդկային ունակությունները և ի ցույց հասարակությանը դնել կյանքը, արհամարհելով Աստվածորդու հետ միավորվելու իրենց անկասելի ձգտումը: Փաստորեն այս անձինք եղան զանգվածային շարունակողը առաքյալների և մարտիրոսների վաղ շրջանի ալիքի: Ազնիվ նվիրումի և գերմարդկային ճիգերի հերոսական դրսեորումը այս մարդկանց հասարակության աչքում դարձնում էր սուրբ նահատակներ, նրանք իրենց գործունեությամբ ամեն օր, ամեն ժամ բազմապատկում էին քրիստոնեական իրականության մեջ քրիստոնեական համայնքի հետևորդների շարքերը: Վերը

<sup>1</sup> Словарь античности, М. , 1989, ст. 147.

նշված քրիստոնեության վերջնական կայացման համար արդյունավետ գործընթացը գունեղ, մեկ տողով ներկայացրել է Տերտուլիանոսը մ.թ. II դ. «Մարտիրոսների թափված արյունը քրիստոնեից եկեղեցու սերմերն են»<sup>1</sup>: Վերջապես մարտիրոսված հերոսների քարոզչությունը և Հրեական կրոնի հետ վերջին պրոտալարային թելիկների հատումը քրիստոնեից համայնքին բերեց քրիստոնեական օրացույցի ստեղծմանը: Վերջինիս մեջ իհարկե նշվում էին այս կամ այն սուրբ նահատակի ծննդյան կամ մահվան օրերը, իհարկե բացառելով նրա ծննդյան և մահվան տարեթվերի մասին խոսակցությունները: Քրիստոնեության, որպես առանձին հասարակական օրգանիզմի զարգացման մեջ ամենաբացառիկ դերը թերևս խաղաց քրիստոնեական օրացույցը, որը քրիստոնեության պատմության ոչ միայն առանձին վերցրած անհատներն իրենց տոնակատարություններով և հիշատակի օրերով պայմանավորում էին քրիստոնեից տարին, այլև հեթանոսական խոշորագույն տոնակատարությունների օրերը գոցվում էին քրիստոնեից ուսմունքի գլխավոր դերակատարներով (դեկտեմբերի 25-ը հանդիսացող Միհրի ծնունդը հոռմեական իրականության մեջ դարձավ Քրիստոսի ծննդյան օր): Միենույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ էական նշանակություն քրիստոնեից վերելքի և զարգացման համար ունենում էր այն խոր և ճկուն քաղաքականությունը, որը իրականացնում էին քրիստոնեական տարածաշրջանային համայնապետերը: Փաստենք, որ արդեն III դ. առաջացել էին չորս պատրիարքարաններ (Հռոմ, Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ), որոնց գլխավորող պատրիարքները վարում էին ճկուն, հեռատես, բայց աննահանջ քաղաքականություն: Նշենք, որ հռոմեական իրավունքով պաշտպանված լինելու համար քրիստոնյաների հոգևոր դեկավարությունը մեկ անգամ չէ, որ դիմեց Հռոմի կենտրոնական իշխանություններին՝ փաստարկելով, որ քրիստոնյաների հանդեպ ևս - պետք է կիրառվի նույն օրենքը, որով կարգավորվում են հարաբերությունները հուղղայականների հետ, քանի որ վերջիններս հոռմեական կայսրության ողջ տարածքով մեկ պաշտպանված էին նախնիների պաշտած աստվածներն անկաշկանդ պաշտելու իրավունքով: Սակայն դիմումները պարբերաբար մերժվում էին, քանի որ հռոմեական իշխանությունները հուղղայականության և քրիստոնեության միջև եղած տարբերություններից ելնելով (կրոնական ուսմունք, ծիսակարգ, օրացույց, դոգմաներ) համարում էին նրանց բացաձակապես տարբեր (եթե ոչ իրարամերժ) կրոններ: Եվ չնայած այս ուղղության վրա անհաջողության մատնվելուն

<sup>1</sup> The HarperCollins Dictionary of Religion, San Francisco, 1995, p. 242.

<sup>2</sup> The Oxford Illustrated History of Christianity, Edited by John McManners, Oxford, New York, 1995, p. 35.

Քրիստոնեից շարժման հզորությունը և ճշգրիտ կառավարման արդյունքում ստեղծված արդյունավետությունը արդեն լիդ. Քրիստոնյաներին դարձրեցին գործոն։ Նշենք, որ Հռոմեական կայսրության մեջ տեղ գտնող հալածանքները ընդդեմ քրիստոնյաների հոգևոր առաջնորդների խորագետ քաղաքականության արդյունքում որպես կանոն ունենում էին հատվածային դրսերումներ։ Մեզ հայտնի են փաստեր, երբ որոշ պրովինցիաներում հալածանքներ ուղղակի տեղի չէին ունենում, իսկ երբ Հռոմեական մետրոպոլիան պահանջեց, որ քրիստոնյաները հարկը տան կայսերը և ոչ մի դրամ չտան համայնքի ղեկավարությանը, ամբողջ գոմինիոնների քրիստոնյա բնակիչները տեղական իշխանություններից գնեցին կեղծ փաստաթղթեր հարկը կայսերը վճարելու վերաբերյալ։ Քրիստոնեից եկեղեցու ազգեցության բարձրացմանը նպաստում էին նաև եկեղեցու իրականացրած մեծածավալ տնտեսական գործառույթները։ Փաստենք, որ III դ. վերջին քրիստոնեից եկեղեցու բաժանմունքները իրենց վրա վերցրել էին նաև դրամատնային լայնածավալ գործունեություն։ Նշենք, որ տոկոսով վարկ տրամադրելը համատրած բնույթ էր կրում։ Այս քաղաքականության մեջ ևս քրիստոնեից եկեղեցու ղեկավարությունը մտցրեց տաղբերակում՝ լավագույն պայմաններով գումարը տրամադրվում էր քրիստոնյա տնտեսական գործիչներին։ Եկեղեցական գործունեության այս ոլորտը կարեռվում էր այնքան, որ նրա քննարկումը նիկեռ տիեզերաժողովում դարձավ կարեռագույն հարցերից մեկը և տեղ գտավ տիեզերաժողովի որոշումներում, համաձայն որի Քրիստոնեից կառույցներին պարտադրվեց վարկը տրամադրել տարեկան ոչ ավելի քան 12% դրույքաչափով։ Հաշվի առնելով, որ տիեզերաժողովը հրավիրված էր կայսերության մետրոպոլիայի կողմից և ընդունված որոշումները մի զգալի չափով արդյունք էին արևելահռոմեական աշխարհիկ իշխանության շահերի, կարելի է եղակացնել, թե որքան մեծ էր եկեղեցու տիրապետած դրամագլուխը, որ իշխանությունները այդպիսի համընդհանուր պարտադրական որոշում էին կայացրել 325 թ. Նիկեռ տիեզերաժողովում<sup>1</sup>։ Քրիստոնեից քաղաքականության ճկունությունը երևում է նաև այն էպիզոդում, երբ արդեն Հռոմեական էլիտա մուտք ունեցող քրիստոնյա բարձրաստիճան հոգևորականներին հաջողվեց համոզել Կոստանդին կայսերը, որ իր հաղթական ճակատամարտից առաջ տեսած տեսիլքում, որտեղ, ինչպես կայսրն էր համարում, նա տեսել էր արեակառ զրահներով Միհր աստծուն, նա տեսել է արեի լուսապակով ճաճանչող Քրիստոսին։

<sup>1</sup> The Oxford Illustrated History of Christianity, Edited by John McManners, Oxford, New York, 1995, p. 39.

Հիշենք, որ քրիստոնեության տարանջատումը հուդայականությունից ընթանում էր նոր ձևավորվող կրոնի շրջանակում ոչ հրեական ծագում ունեցող տարրի բացառիկ քանակական աճի հետևանքով։ Նախորդող կրոնական կաղապարի արագ օտարումը հարմարվողականության բացառիկ մեծ պոտենցիալ էր ստեղծում կրոնական համակարգի և նրա կառուցվածքային դրսեորումների համար։ Հոռմեական կայսրության յուրաքանչյուր հատվածում գոյություն ունեցող իրավիճակին քրիստոնեության համապատասխանացման անկաշկանդ և արագ ընթացքը պայմանավորում էր երկրորդ դարից սկիզբ առած և քրիստոնեության տարածման խստագույնս նպաստող ավետարանումը (եվանդելիզացիան)։ Հիսուսին վերաբերող հնարավոր աղբյուրների (ավետարանների) տարածումն ու բազմապատկումը կտրուկ բարձրացնում էր քարոզչության արդյունավետությունը։ Եվ թերեւ տարածաշրջանային իրավիճակների աղապտացման հետևանք էր բազմաքանակ ավետարանական գրականության ի հայտ գալը, որը մի կողմից նպաստելով հետեւրդների բազմության աճին, մյուս կողմից տարրալուծում էր կրոնաղավանաբանական ուսմունքի միատարրությունը և այլ կրոնական ուղղություններից առանձնացնող ուրվագիծը։ Քրիստոնեության որպես փրկության կրոնի հասարակական համարման բարձրացման հարցում վճռորոշ դերակատարություն ունեցավ նաև II դարից սկիզբ առած վանական շարժումը։ Այն սկիզբ առավ Եգիպտոսից և տարածվեց Մերձավոր Արևելքում, իսկ ավելի ուշ նաև ամբողջ կայսրությամբ մեկ։ Զարի դեմ անհատական պայքարի աննկուն մարտիկները սեփական համոզմունքները ազատ արտահայտելու իրենց անսանձ բնավորությամբ և մարդկային հնարավորությունների սահմանները էքստատիկ նվիրման մեջ հաղթահարելու կամքով բարձր ժողովրդայնություն էին վայելում և նպաստում քրիստոնեության թափանցմանը հասարակության ամենախորին շերտերը։ «քրիստոնյաները հավատում էին, որ կատարելության հասնելու հետեւղական ձգտումը մոտեցնում էր վանականներին Քրիստոսին և Աստծուն՝ ապահովելով նրանց համար հաղթանակ վերջին դատաստանի օրը»<sup>1</sup>։

Նշենք, որ այս ժամանակաշրջանի առանցքային խնդիրը, որը կրում էր բացառիկ դրամատիկական ընթացք հոռմեական տիեզերակալ կայսրության բաժանումն էր երկու մասերի՝ արևմտյան և արևելյան (բյուզանդական) կայսրությունների։ Արևմտյան հոռմեական կայսրության մեջ քրիստոնեությունը մնաց իշխանության հետ հարաբերություններում վանականության կողմնորոշման կրողը, համաձայն որի քրիստոնեական եկեղեցին պետք է առանձնացնի մարդկային հոգիների վրա ունեցած իր իշ-

<sup>1</sup> Религиозные традиции мира, М., 1996, ст. 374.

խանությունը աշխարհիկ իշխանություններից, հետևաբար աշխարհիկ իշխանությունների թափանցումը ներեկեղեցական գործերի շրջանակ անհրաժեշտ էր բացառել։ Թերևս այս կարծիքի գերակա լինելու ոչ սակավ կարեոր պատճառ էր նաև այն հանգամանքը, որ հոռմեական վերնախավը, որպես կիրառական իշխանության գլխավոր կրող, շատ երկար պահպանեց հավատարմությունը նախնյաց հեթանոսական աստվածներին։ Այլ էր իրավիճակը արեելյան հատվածում, այստեղ քրիստոնեությունն արդեն երկրորդ դարի վերջից և III դարի ընթացքում նվաճել էր խիստ լուրջ դիրքեր, և փաստորեն IV դարի սկզբներին սերտաճել էր բարձրագույն իշխանության հետ՝ դառնալով նրա կարևորագույն հիմնասյունը։ Այստեղ իշխանությունը ոչ միայն օտարված չէր ներեկեղեցական խնդիրներից, այլև իր պարտքն էր համարում պայքարել հանուն սեփական շահերի պաշտպանության կայսրությունը ամբողջականացնող ամենամեծ սոցիալական ցանցի մեջ։ Կայսրը այստեղ օժտված էր հոգեկոր իշխանության որոշակի հատկանիշներով, նա իրավունք ուներ ձեռքերում բռնած պահել հաղորդության գավաթը, եկեղեցական լիթուրգիայի ժամանակ իրավունք ուներ քայլելու, ուներ կրոնական քարոզչության իրավունք և դոգմատիկայի շուրջ ծավալվող վեճերի ժամանակ կարող էր արտահայտել իր կարծիքը։ Կայսրն ըստ ամենայնի կարող էր նպաստել այս կամ այն հոսքի գաղափարների քարոզչությանը, ինչպես և գումարել տիեզերաժողովներ հետամուտ կերպով մասնակցելով բոլոր քննարկումներին և իր կողմնակիցների թիմի հետ միասին վճռորոշ մասնակցություն ունենալով հանգանակի ձեւակերպմանը, հաստատմանը, վերահստատմանը։ Կայսրը համակիրների խմբով վճռորոշ ազդեցություն էր ունենում ինչպես եկեղեցական (հոգեռականների վարքը, պարտականություններն ու իրավունքները սահմանող) օրենքների, այնպես և հավատավոր զանգվածին ուղղված օրենքների ձեւավորման ժամանակ։ Ներեկեղեցական խնդիրների քննարկման ժամանակ թե՛ բարձրագույն իշխանության կրողը, թե՛ աշխարհիկ էլիտայի շատ ներկայացուցիչներ իրավունք ունեին ուղղակի մասնակցության, ինչը որպես երևույթ առ այսօր վառ կերպով դրսեւորվում է արեելյան եկեղեցիների հոգեկոր ղեկավարների ընտրությունների ժամանակ, ինչը չես ասի կաթոլիկ եկեղեցու մասին։

Ելնելով վերը նշվածից, գալիս ենք այն եղբակացության, որ հոռմեական կայսրության արեելյան հատվածի բարձր կայունությունը ապահովում էր նաև կրոնական և հոգեկոր իշխանությունների սերտաճում, որը այս փուլում առավելություն էր տալիս արեելյան քրիստոնեական եկեղեցին արևմտյանի հետ մրցակցության մեջ։ Բացի վերը բերվածը նշենք, որ IV դարի կեսերից կայսրության արևմտյան հատվածը ներքաշվեց տևական

ցնցումների ու վայրիվերումների մի հորձանուտի մեջ, որը պայմանավորված էր կայսրության հյուսիսային սահմանին հարակից տարածքներում ազրեսիվ բարբարոսական իշխանությունների ցեղային միավորումների, պետական գոյացությունների ի հայտ գալով։ Վեստ գոթերի, օստ գոթերի, վանդալների իսկ ավելի ուշ նաև հոների արշավանքներն ու տեղաշարժերը հարյուրամյակներով թաղեցին Արևմտյան կայսրությունը անկայունության ճահճի մեջ։ 410 թ. օստ գոթերի առաջնորդ Ալյարիխի կողմից Հռոմի գրավումը առաջ բերեց սուր քննադատություն քրիստոնյաների հասցեին։ Նրանք մեղաղրվում էին պակաս հայրենասիրության և օտար նվաճողին չհակաղրվելու քաղաքականության մեջ։ Սակայն եկեղեցու հզորությունը այնքան մեծ էր, որ անգամ համընդհանուր պարսավանքի փորձերը ոչ մի ազդեցություն չունեցան նրա հեղինակության վրա։ Արդեն *V*դ. կեսերին արևմտյան հռոմեական կայսրության տարածքում քրիստոնեից եկեղեցու բարձրաստիճան սպասավորները դիտարկվում էին որպես բարձրագույն հասարակական էլիտայի ներկայացուցիչներ և իրավիճակի պատասխանատուներ։ Վերը բերված խոսքերի վառ դրսերումը կարելի է համարել եկեղեցայի համար երկնահաս աղետ հիշեցնող հոների առաջնորդ Աթիլայի արշավանքի կասեցման վճռորոշ փուլում՝ *Օռլեանի* պաշտպանության ժամանակ եպիսկոպոս Անիանոսի խաղացած դերը։ «Անիանոս, այդպիսին էր եպիսկոպոսի անունը, ով հայտնվեց Արլում որպես ներկայացուցիչ, դեպան և (*Օռլեանի* է հավելումն իմն է) կառավարիչ»<sup>1</sup>։

Ավելի ուշ՝ *Օդոպակրի* իշխանության հաստատումը Հռոմում ճանապարհ հարթեց արևելյան հռոմեական կայսրության կայսրերի համար սկսել արևմտյան կայսրության տարածքների և բուն Հռոմի ներառումը իրենց իշխանության տակ։ Նշված գործընթացը անխուսափելիորեն պետք է առաջացներ հակաղրություն, ավելի ուշ նաև թշնամանք արևելահռոմեական կայսրության կայսեր և Հռոմի պապի միջև։ Փաստորեն պետականության կործանումը արևմուտքում (474 թ.) ազգությամբ գոթ Օդոպակրը, որը բացարձակ իշխանություն էր հաստատել Հռոմում, հավաքեց և ուղարկեց Կոստանդնուպոլիս Հռոմեական կայսերական իշխանության բոլոր խորհրդանիշները։ Մեր խորին համոզմամբ բյուզանդական կայսեր և Հռոմի պապի միջև հակաղրության հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ մոտ 5 դար տեսած եկեղեցաշինությունը Հռոմեական կայսրության մեջ հանգեցրել էր ոչ միայն կայսրությունով մեկ կառույցների ձևավորմանը, որ ճշգրիտ համապատասխանության մեջ էին հռոմեական տարածքային բաժանումների հետ, այլև աստիճանաբար ճշգրտորեն եկան

<sup>1</sup> Էդվարդ Խատտոն, Ատիլա, Մ., 2005, ստ. 82.

Հոռմեական միաբեկո հիերարխիայի ձևավորմանը, ինչն իր մեջ ներառում էր գյուղերը, ավանները, տարածքային կենտրոնները, դոմինիոնները և ավարտվում էր Հոռմի պատրիարքով (Պապ): Արևմտյան հատվածի քաղաքական, տնտեսական անկման գնալով խորացումը կոմպենսացվում էր քրիստոնեական կառույցների պահպանմամբ և նոր ձևավորվող բարբարոսական իշխանությունների ներսում քրիստոնեական քարոզչության հաջողություններով: Քաղաքական և կրոնական վերը բերված տարբեր խճանկարների գոյությունը պայմանավորում էր Հոռմի պապի և Բյուզանդիայի կայսեր միջև անլուծելի հակասությունների դաշտի առաջացումը: Նշենք, որ արևելյան քրիստոնեության գերակայությունը վաղ հատվածում խիստ ակնբախ է այն պատճառով, որ բոլոր չորս ընդունված տիեզերածողովները տեղի են ունեցել Բյուզանդական կայսրության տարածքում և ընթացել են կայսեր պատրոնաժի ներքո: Հոռմի պապը ներկայացված է եղել միշտ իր պատգամավորական խմբով և ընդգծված գերակատարություն տիեզերածողովների ընթացքում չի ունեցել: Նշենք, որ պայմանականորեն ասած երկու կողմերն էլ պետք է անվերապահողեն ճանաչեին իրենց նվիրվածությունը Փրկչի եկեղեցու միասնականությանը, ինչը շատ դժվար էր անել ստեղծված անհամաշխափությունների պայմաններում: Նշվածի ֆոնի վրա սկիզբ առան թեոլոգիական առումով միմյանցից զգալիորեն տարբերակվող զարգացումներ: Հոռմեական հատվածի համար քրիստոնեից ուսմունքի մեխը դարձավ Հիսուսի ինքնազոհաբերման պահը, որպես մարդոց մեղքերը գնելու ակտ, ինչից հետեւ լիթուրգիայի, եվխարիստիայի (հաղորդության) կուլմինացիոն և գերակա դառնալը: Փաստորեն Հիսուսի մարմնի պատառոտվելը, որպես խորհրդաբանական ակտ կապված էր խաչելության հետ: Աստիճանաբար Հոռմեական եկեղեցում երկրորդայնացավ մկրտության արարողությունը, որը վաղ քրիստոնեության մեջ դիտվում էր գերակա: Այսօր էլ կաթոլիկ եկեղեցին մկրտության արարողությունը փոխարինում է ջրցողանքով, ինչպես և տարիքային սահմանափակում է դնում «պայմանական» մկրտություն ընդունողների հարցում: Ի տարբերություն հոռմեական կողմնորոշման բյուզանդական թևում խորհուրդների մեջ գերակա է մկրտությունը, որը դիտվում է որպես Հիսուսի խաչելության (երբ երեխային դնում են ջրի մակերեսույթին), մահվան (երբ նրան սուզում են ջրի մեջ) և հարության (երբ նրան դուրս են քաշում ջրից) խորհուրդ: Այստեղ գլխավորը ոչ թե Հիսուսի զոհաբերության և մահվան հատվածի վրա ծանրանալն է, այլ նրա կողմից մահվան հաղթահարման և մարդուն հավերժական կյանքի ճանապարհ շնորհելը: Այս տարբերակումը խիստ ցցուն կերպով երևում է նաև գլխավոր խորհրդանիշի վրա, հոռմեական խաչը հատված ուղղանկյուն եղբերով մահվան

գործիքի խորհրդանիշն է, մինչդեռ արևելյան քրիստոնեությանը հատուկ են ծաղկած խաչերը։ Վերը նշված հարաբերակցությունը քրիստոնեից եկեղեցու պատմության մեջ խախտվեց իսլամական գործոնի ի հայտ գալով։ Բյուզանդական կայսրությունը կորցրեց իր տարածքների մի ստվար հատվածը, իսկ արևմուտքում սկսեց ենթարկվել սլավոնների (սերբեր, բուլղարներ, ոռուներ) կործանարար արշավանքներին։ Կայսրության ուղղմատընտեսական պոտենցիալը անկում ապրեց, քանի որ դրանից անդառնալիորեն պոկեցին Սիրիան, Պաղեստինը, Եղիպտոսը և ամբողջ Հյուսիսային Աֆրիկան մինչև Կարթագեն։ Արաբները խլեցին միջերկրական ծովի կղզիները, որոնք համարյա բոլորը պատկանում էին Բյուզանդիային։ Արաբները երկու անգամ գրոհով փորձեցին վերցնել Կոստանդնուպոլիսը, բայց չհաջողեցին։ Բուլղարներն ու սերբերը Բյուզանդական կայսրությունից խլեցին Բալկանյան թերակղզու Հյուսիսային հատվածը և բնակեցին այնտեղ։ Ստացած այս ցավոտ կորուստների ֆոնի վրա արևմուտքում սկսում էր վեր հառնել նոր քրիստոնեական կայսրությունը։ Իսկ քրիստոնեից եկեղեցին արևուտքում 742 թ. սկսեց կարգավորել գոյություն ունեցող կառույցները՝ հաստատելով օրենքներ, որոնք հոգևորականների համար պետք է լինեին համընդհանուր։ Ժողովը նախագահում էր քրիստոնեության պատմության ամենանվիրյալ և հաջողակ քարոզիչներից մեկը՝ Բոնիֆացիուսը, որին հաջողվել էր տարածել քրիստոնեությունը Հյուսիսային Գերմանիայում և սկանդինավյան երկրներում։ Համաժողովը հրամայեց եկեղեցականներին «ձեռնպահ մնալ ճակատամարտերից, պնդելով, որ եկեղեցականները պետք է սիրուհիներ պահելուց հրաժարվեն, ինչպես և արգելեց մոգական երգեցողությունը և եկեղեցիներում կենդանական զոհեր մատուցելը»<sup>1</sup>։ Կրոնական խնդիրներում խիստ բծախնդիր և գործուն մասնակցություն ունեցող Պիպին Կարճահասակի իշխանությանը հաջորդեց Կառլոս Մեծի աշխարհական կայսրությունը, որը որպես մրցակից ճանաչում էր Բյուզանդիան, քանի որ Եվրոպայում չկային նրան մարտահրավեր նետողներ։ Նշենք, որ Կառլոս Մեծի գործուն իշխանության ազդեցությունը արևմտյան քրիստոնեության վրա եղել է խիստ մեծ և իր հիմքում հետագա եկեղեցական բազում դրական տեղաշարժեր պայմանավորող։ Նա իր ողջ իշխանության հզորությամբ պարտադրեց Բոնիֆացիուսի հեղինակած մոտեցումների իրականացումը եկեղեցու ներսում։ Նրա վարած ինտենսիվ քաղաքականությունը միտված էր քրիստոնեական եկեղեցու կենտրոնաձիգ հիերարխիայի ուժեղացմանը և Հռոմի որպես արևմտյան քրիստոնեության միացյալ կենտրոնի դերակատարության բարձրացմանը։ Ընդու-

<sup>1</sup> Религиозные традиции мира, М., 1996, ст. 382.

նելով աշխարհիկ իշխանության միապետի թագի հետ միասին նաև կարդինալի վեղարը, նա իրականացրեց կտրուկ փոփոխություններ հրամայելով քանդել բոլոր եկեղեցիների խորանները, որոնց մեջ չկային սուրբ մասունքներ: Բոլոր երդումները իրական էին, երբ տրված էին Սուրբ մասունքների առաջ: Նա հոչակեց արգելք նոր սրբերի կանոնիզացման գործընթացում: Այս ամենը կախման մեջ էր դնում հոգեորականների բազմությանը Հոռմից: Կառլոս Մեծը առանձնակի ուշադրություն էր հատկացնում նաև կրթությանը՝ լինելով եկեղեցական կրթություն անցած հորորդի և եկեղեցում կրթություն ստացած մարդ, նա հաստատեց կրթական համակարգ և պարտադրեց իր իշխանության ներքո գտնվող բոլոր եպիսկոպոսներին և վանական հաստատություններին բացել դպրոցներ, որտեղ հոգեորականների ուսուցման ծրագրում առանձնակի ուշադրություն պետք է դարձվեր մաթեմատիկական գիտելիքներին, լատիներենի խորացված իմացությանը և երգեցողությանը: Վերը նշված զարգացումների տրամաբանական ավարտը մեր խորին համոզմամբ Կառլոս Մեծի կայսերական թագով թագաղորումն էր, որը տեղի ունեցավ 800 թ. գեկտեմբերի 25-ին Հիսուսի ծննդյան տոնական պատարագի ժամանակ: Սակայն հետագա ուսումնասիրողները այս իրադարձությունը բացատրում են Կառլոս Մեծի ուղղակի ձգտմամբ և կայսերական թագ կրելու թախանձագին ցանկությամբ՝ «...Փրանկական արքան միևնույն ժամանակ հանդիսանում էր այդ ներկայացման հեղինակը և ռեժիսորը»<sup>1</sup>: Ինչպես նաև մեծ տարածում ունի այն կարծիքը, որ «...նոր որակով կրկնվում էր Կառլոս Մեծի հոր՝ Պիպին կարճահասակի փորձը»: Այնտեղ սատարելն էր պապին և արքայական տիտղոսը, այստեղ՝ պապի փրկությունը և կայսերական դիակեմը: Մեծ հարգանքով վերաբերվելով խնդրո առարկայով զբաղված մասնագետներին՝ նշենք, որ Կառլոս Մեծի թագաղրման կայսերական ակտը նախորդող կարևորագույն զարգացումների արխիտեկտոնիկայի բնական վերջավորումն էր: Միասնական օրգանիզմի վերածվող Հոռմեական եկեղեցին արևելյան քրիստոնեաց եկեղեցուն լիարժեք հակակշիռ դառնալու համար՝ կարիքն ուներ իր ստրուկտուրալ ամբողջականության թիկունքում կանգնած կայսերական գագաթի: Ամենայն հավանականությամբ եկեղեցին կատարված ակտի մեջ զգալիորեն ավելի շատ էր շահագրգուված, քան ինքը Կառլոս Մեծը, որը հետագայում չէր թաքցրել իր դժգոհությունը տեղի ունեցածի կապակցությամբ: Զմոռանանք նշել նաև, որ Հոռմ քաղաքի էլիտան ևս տեսնում էր այդ իրադարձության մեջ այն ճանապարհի սկիզբը, որը հետագայում պետք է բերեր «տիեզերակալ Հոռմի վերա-

<sup>1</sup> Анатолий Левандовский, Карл Великий, М., 1999, ст. 69.

**ծնունդին»:** Հոռմեական եկեղեցու և արևմտյան աշխարհիկ իշխանությունների միջև փոխադարձ ձգողականությունը և միմյանց լրացնելու ինստինկտը այնքան էր մեծ, որ Կառլոս Մեծի մահվանից հետո էլ հարյուրամյակներ շարունակ պահպանվեց սրբազն հոռմեական կայսրություն անվան, որոշ դարերի ընթացքում անգամ սեփական սահմանների ուրվագիծը չիմացող կրոնաշխարհիկ իշխանության գոյությունը։ Կարողինդների կայսրությունը դարձավ այն քաղաքական հակակշիռը, որը եկեղեցու վերը նշված կրոնադավանաբանական հակադրությունների դաշտը բերեց արևելքի քրիստոնեության հետ վերջնական խզման։ Թերևս դասագրքային ճշմարտություն է դարձել այն հանգամանքը, որ մեծ սխիզմը (պառակտումը) տեղ է գտել 1054 թ., սակայն քրիստոնեից աշխարհի երկու հատվածների միջև փեղեքումը դե ֆակտո տեղի է ունեցել նշված ժամանակահատվածում։ Խնդրո առարկան նիկեռ հանգանակն էր, որի դրույթներից մեկի համաձայն Սուրբ Հոգին ճառագում էր Հայր Աստծուց։ Համայնքրիստոնեից աշխարհի համար նիկեռ հավատո հանգանակը ևս մեկ անգամ հաստատվել էր 381 թ. Կոստանդնուպոլիսի ժողովում։ Դերևս Vդ. բյուզանդական կայսրության կողմից հովանավորվող արիոսական քարոզիչների դեմ պայքարի արդյունքում հոռմեական եկեղեցին հավատո հանգանակի մեջ ավելացրեց Փիլիպքվե է «նաև որդուց» բառը, քանի որ արիոսականները համարում էին, որ Հիսուս Քրիստոսը հավասար չէ Հորը, որ նա ունի հրեշտակային էություն, և որ նրանով է Հայրը իրականացրել արարչագործությունը։ Այս փոփոխությունը իրականացնելու համար Հոռմեական եկեղեցին պայմանավորեց, որ վեստ գոթերը քրիստոնեությունը ընդունում են միայն վերը նշված հանգանակային փոփոխությամբ։ Զեակերպման լրացման որպես պատճառ վեստ գոթերը բերեցին ժողովրդական զանգվածների համար հավատո հանգանակի առավել հասկանալի լինելու հարցը։ 787 թ. արդեն ուազմաքաղաքական լուրջ կորուստներ կրած Բյուզանդական կայսրությունը պատրիարք Թորոսիուսի նախաձեռնությամբ նոր տիեզերաժողով գումարեց նիկեայում, որը կոչվեց նիկեռ երկրորդ տիեզերաժողով։ Այս ժողովին հրավիրված էին 307 եպիսկոպոս, որոնց թվում և Հոռմի պապի ներկայացուցիչները։ Սակայն նրանց թվում սակավ էին Փրանկական կայսեր ներկայացուցիչները, ինչը պատրիարք դարձավ չճանաչելու նիկեռ երկրորդ տիեզերաժողովի որոշումները, չնայած այն հանգամանքին, որ այդ որոշումները ճանաչեց անգամ ինքը պապը՝ Աղրիան I, ով հրապարակավ փաստեց քրիստոնեից Սուրբ եկեղեցու միասնականության վերականգնման մասին։ Ֆրանկական կայսեր Կառլոս Մեծի պահանջով և անձնական վարձատրությամբ հավաքվեցին տասնյակ հոգևոր գործիչներ (69), ովքեր ուսումնասիրության տակ վերցրին նիկեռ հանգանակը

և վերջին հաշվով 791 թ. ճանաչեցին այն՝ Աստվածաշնչին չհամապատասխանող։ Չնայած հաջորդ Հոռմի պապը Լեռն III, սկանդալային պատմությունների արդյունքում պահպանեց պապական աթոռը միայն Կառլոս Մեծի սատարման և ուղղակի ճնշումների արդյունքում, միևնույնն է Նիկեո Հանգանակի հերքման հարցում նա մնաց իր նախորդի դիրքերում։ Անաշառությունը պահպանելու համար նշենք, որ Նիկեո հանգանակում Սուրբ Հոգու Հայր Աստծուց ճառագելու դրույթը վերցված է Հովհաննու Ավետարանի 15:26, որտեղ ուղղակի շարադրված է հետեւյալը. «...բայց երբ դա Միամիթարիչը, որին ես ձեզ կուղարկեմ Հորից, ձշմարտության Հոգին, որ ելնում է Հորից, նա կվկայի իմ մասին...»։ Ֆիլիփոքվե բառի վերադարձը տեքստ պայմանավորված էր Մոնտե-Օլիվո աբբատության ներկայացուցիչների կողմից, ներկայացված բողոքով Հոռմի պապին, որն էլ գործը ուղարկեց Կառլոս Մեծին։ Վերջինս հանձնարարեց իր խորհրդական եպիսկոպոս Ալկուինին դիտարկել հարցը, որից հետո ճանաչվեց Նիկեո հանգանակի անհամապատասխանությունը Սուրբ Գրքին և չնայած Լեռն III կատարեց մի վերջին անհույս դիմադրության քայլ «... չօգնեց անգամ այն, որ պապը հրամայեց քանդակել Նիկեո - Կոստանդինոպոլսյան հանգանակը արծաթե տախտակների վրա, որոնք ցուցադրված էին Սուրբ Առաքյալների տաճարում»։ Կայսեր համառությունը արագ պտուղներ տվեց։ Նրա հավատու հանգանակը ֆիլիփոքվե բառով տարածվեց ամբողջ արևմտյան Եվրոպայով և Լեռն III հաջորդած պապերը ընդունեցին այն որպես դոգմա<sup>1</sup>։

Քրիստոնեից շարժման մասին խոսելիս հարկ է նշել, որ այս կրոնի ամենազորեղ կողմերից մեկը միսիոներական շարժումն է, որի լիցքը թվում է անսպառ, չնայած հազար ու մեկ վայրիվերումներին։ Նշվածի վառ ապացույցն է այն հանգամանքը, որ արեմտյան Հոռմեական կայսրության անկման պայմաններում քրիստոնեից նվիրյալների քարոզչությունը V-VIII դդ. ընթացքում տարածեց քրիստոնեությունը վեստ գոթերի, ֆրանկների, լանգորարդների, նորմանների և սկանդինավյան ժողովուրդների մեջ։ Նույնը կարելի է ասել քրիստոնեից արևելյան աշխարհի մասին։ Այսուղ ծանրագույն մաքառման ժամանակներում VII-VIII դդ. իսլամի հետ առնակատման փորձության ընթացքում և դրանից հետո միսիոներական ճնշումը հանգեցրեց սերբերի, բուլղարների և կարենորագույն Մեծ Ռուսիայի քրիստոնեությանը։ Իհարկե նշենք, որ քրիստոնեից երկու խոշորագույն եկեղեցիների քարոզչությունը ևս ընթանում է մրցակցության դաշտում։ Սերբերի և բուլղարների մոտ քարոզչական առաքելությամբ հայտնվել էր նաև Հոռմի պապի միսիաները։ Մորավիայի տարածքում (արդի Չեխիա)

<sup>1</sup> Анатолий Левандовский, Карл Великий, М., 1999, ст. 107

գործում էին գերմանական արքաների էմիսարները, սակայն բոլոր վերը նշված դեպքերում, ինչպես և Ռուսաստանում հաղթանակ տարան Բյուզանդական օրթոդոքս եկեղեցու քարոզիչները: IX դ. կեսերին Բուլղարիայի արքա Բորիսը մկրտվեց և ընդունեց քրիստոնեություն, դրան հաջորդեց Սերբիան և վերջապես X դ. Բյուզանդական քրիստոնեությունը ընդունեց Ռուսիան: Այս հոռմեական եկեղեցու հանդեպ կոնտրաստային առավելությունը պայմանավորված էր նրանով, որ Կոստանդնոպոլսի Փոթ պատրիարքի հանձնարարականով վերը նշված երկրներ մեկնող քարոզչախմբերը իրենց հետ տանում էին նշված տարածքները բնակեցնող ժողովուրդների լեզվով թարգմանած Աստվածաշնչյան տեքստերը: Միևնույն ժամանակ նշված ժողովուրդներին հանձնելով միևնույն առանցքային հիմքի վրա ստեղծված սլավոնական այբուբենները, որոնք իհարկե ուժեղացնում էին տվյալ ժողովուրդների հակումը ուղղափառ քրիստոնեության հանդեպ: Տվյալ ժողովուրդների մեջ համեմատությունը բյուզանդացիների օգտին էր նաև այն պատճառով, որ հոռմեական եկեղեցին ինչպես ողջ ծիսակարգը, այնպես էլ Աստվածաշնչյան տեքստերը ներկայացվում էին միայն լատիներենով, ինչը ոչ միայն ուներ իր ծանր հաղթահարելի բարդությունները, այլև խորթ էր ավյալ ժողովրդի համար: Հակասությունները երկու խոչուրագույն եկեղեցիների միջև վերջիվերջո հանգեցրեցին մեծ սխիզմի, որի դրդապատճառը եղավ նորմանական զինուժի կողմից հյուսիսային Խոտալիայում բյուզանդական դոմինիոնի նվաճումը: Ելնելով այս փաստից Հռոմի պապը պահանջեց, որ գրաված երկրի հավատացյալները անցնեն իր ենթակայության տակ, սակայն այս հարցում, ինչպես և կարելի էր ենթադրել, հանդիպեց Պոլսո պատրիարք Միքայել Կերուլարիուսի դիմադրությանը: 1054 թ. Հռոմի պապի լեզաւները, իր խստությամբ աչքի ընկնող կարդինալ Ումբերտի գլխավորությամբ, մեկնեցին Կոստանդնոպոլիս և այստեղ արհամարհական ընդունելության արժանացան, որից հետո կարդինալ Ումբերտը պատվիրակության գլուխ անցած մտավ Պոլսո ԱյաՍոֆիայի տաճարը և այնտեղ կարդաց անաֆեման՝ վերաբերվող Միքայել Կերուլարիուսի քրիստոնեից եկեղեցուց վտարման մասին, ինչին ի պատասխան պատրիարքը գումարեց ժողով և հեռացրեց քրիստոնեից եկեղեցուց պատվիրակության բոլոր անդամներին: Այս վեղեքումը դե յուրե վերանայվել է միայն 1965 թ. Վատիկանի երկրորդ տիեզերաժողովի փակումից քիչ առաջ: Նշենք, որ Հռոմի պապը փորձում էր պարտադրել հոռմեական նվիրապետական կարգը (կուսակրոնություն), հաստատել եվլարիստիայի գերակա դերը մկրտության հանդեպ և վերջապես հնարավորություն ունենալ դե յուրե ներազդելու Պոլսո պատրիարքի ընտրությունների վրա:

Չնայած այս պառակտիչ ակտի կայացմանը այնուամենայնիվ քրիստոնեից աշխարհը աներևույթ թելերով պահպանում է իր ամբողջականությունը և չնայած կրոնաքաղաքական և դավանաբանական տարամետ ձգտումներին, փոխաղարձ մեղադրանքներին և ատելությանը տագնապի պահին, միևնույն է, զգալի էր փոխօգնության ձգտումը։ Այսպիսի մի յուրօրինակ փորձություն էր Բյուզանդական կայսրության և համայնքրիստոնեության համար թուրք սելջուկների մուտքը և կայացումը արաբական խալիֆայության իրաքյան և փոքրասիական հատվածում։ Արալյան ծովի մերձակայքից Խորասանի տարածքներով դեպի խալիֆայության նշանակած հատվածները հոսող այս քոչվոր բազմությունը հասավ գերակայության խալիֆայության ներսում՝ կոտրելով Աբասյան հարստության շիայական պատկանելիությունը՝ խալիֆայությունով մեկ հաստատելով իրենց իշխանությունը, և սուլթան Ալպ Առասլանի գլխավորությամբ թուրքերը 1071-3 թ.թ. կատարած արշավանքի արդյունքում տիրացան Երուսաղեմին և բնակվեցին Հարակից տարածքներում։ Սելջուկ թուրքերի մուտքով արևելյան քրիստոնեության քաղաքական խնդիրները կտրուկ բարդացան, պարզ դարձավ, որ համագոյակցությունը այս բարբարոսական վաղնջական հոգեբանություն կրող անձանց բազմության հետ համարյա անհնարին է։ Համաքրիստոնեական ուխտագնացության գլխավոր սրբավայրը վերածվեց թալանի, բռնությունների և առօրինական ազօրինականության վայրի։ Թուրքերը թալանում էին ուխտավորներին լավ իմանալով, որ վերջիններս պետք է իրենց հետ ունենային միջոցներ ուխտագնացությունը իրականացնելու համար։ Տասնամյակներ շարունակ թե՛ բյուզանդական կայսեր, թե՛ Հռոմի պապի գրասենյակում կուտակվում էին պիլիգրիմների բողոքները, որոնք բացահայտում էին մղձավանջային իրավիճակը, որն առօրյա էր Երուսաղեմի և հարակից տարածքների համար։ Ստեղծած արյունային մղձավանջը պահանջում էր լուծում և որպես քրիստոնեից աշխարհի բարձրագույն ներկայացուցիչներ իշարկե իրավիճակի հանգուցալուծմանը պետք է միջամտեին քրիստոնեից դաշտի գլխավոր գերակատարները՝ Հռոմի պապ Ուրբան II ու Բյուզանդիոն կայսրը Ալեքսեյ I Կոմնինը։ Նշենք, որ շուրջ քսան տարիների ընթացքում պարբերաբար տեղ հասած լուրերից ձեւվորվել էր հասարակական կարծիք, որ ուխտագնացության մեկնելը խաղ էր մահվան հետ։ Այս ընդհանուր հասարակական կարծիքը կարիքն ուներ ընդամենը մի կայծի, որը բռնկվեց Հռոմի պապ Ուրբան II կոչով՝ Տիրոջ գերեզմանի փրկությունը ապահովել զենքի ուժով՝ այդ աստվածահաճո գործի պատասխանատվությունը դնելով եվրոպական միապետների վրա։ Ելույթը տեղի ունեցավ Կլերմոնի ժողովի ավարտից հետո, երբ Լեպիույում (Ֆրանսիա) 1095 թ. նոյեմբերի 27-ին

Ուրբան II նշեց. «Տիսուր լուրեր եկան Երուսաղեմի շուրջ գտնվող հողերից և Կոստանդնոպոլսից»<sup>1</sup>: Մեկը մյուսին հաջորդեցին հինգ խոշոր խաչակրաց արշավանքներ, այսօր հեղինակներից շատերը, որոնք ուսումնասիրում են այս բազմաբարդ հասարակական անցքերը տարամետ պատճառներ են բերում, որոնցով փորձում են բացատրել արշավանքները: Կարծիքների ցրումն այս առումով իր մեջ ներառում է հարազատ Եվրոպան պատերազմներից զերծ պահելուց և պատերազմական պոտենցիալը արևելյան ուղղությամբ դուրս բերելուց սկսած մինչև արշավանքները Բյուզանդական կայսրության թուլացմանը միտված գործողություններ հայտարարելը: Իրականում նշենք, որ խաչակրաց արշավանքները ծրագրված էին և իրականացվում էին երեք ուղղություններով՝ մի կողմից պետք է ազատագրեին բուն Եվրոպայի արևելյան բաղադրիչը հանդիսացող Խսպանիան սարակինոսներից, մավրերից ու բերերներից, մյուս կողմից խաչակիրները պետք է նվաճեին մերձբալթյան ափերը (գործ որի ողջ ծանրությունը ընկավ Տեսոնյան և Լիվոնյան ասպետական օրդենների վրա), որոնք դեռևս բնակեցված էին տակավին հեթանոսական հավատալիքներով ապրող ժողովուրդներով, և խաչակրաց արշավանքի երրորդ կողմի թիրախը Երուսաղեմում և նրա շուրջ քրիստոնեական թագավորություն ստեղծելն էր, որը ազատ հնարավորություն կրնակներ քրիստոններից ուխտավորներին այցելել Տիրոջ գերեզման: Փաստենք, որ մեր խորին համոզմամբ այդ ոիսկային և ծախսատար կամպանիաների հիմքում գլխավոր շարժառիթը կրոնականն էր, հակառակ պարագայում անբացատրելի են համաեվրոպական նշանակություն ունեցող միջոցառումները, որոնք ոչ միայն իրենց ազգեցությունն էին ունենում մերձավոր արևելյան տարածաշրջանում, այլև խորը հակադարձ փոփոխություններ բերեցին «Հին մայրցամաքի»: Իրարահաջորդ խաչակրաց արշավանքները հանգեցրին Երուսաղեմի քրիստոնեից թագավորության ստեղծմանը, ոչնչացմանը, Երուսաղեմի հանձնմանն ու նորից նվաճմանը, սակայն վերջին հաշվով ի օգուտ քրիստոնեության տեկտոնիկ փոփոխություններ չառաջացրեցին: Իհարկե արևելյան և արևմտյան քրիստոնեությունների միջև նոր թշնամանքի ալիք սերմանվեց այն բանից հետո, երբ Վենետիկյան վերնախավի կողմից ուղղորդված չորրորդ խաչակրաց արշավանքը ավարտվեց ընդամենը Կոստանդնոպոլսի գրավմամբ և թալանով 1204 թ.: Նշենք, որ այս թալանչիական արշավի հետևանքները եղան ծանրագույն և թերևս անսպասելի Եվրոպական տերությունների ու Հռոմի պապի համար: Բյուզանդական կայսրություն՝ նվաճողական իսլամի հետ շփման արևելյան սահմանագիծը թուլացավ,

<sup>1</sup> Ռոլլին Արմոր, Ислам и христианство, М., 2004, ст. 110.

զրկվեց դիմադրունակությունից և դարձավ օսմանյան թուրքերի հեշտ նվաճման թիրախ: Իհարկե այն բանից հետո, երբ օսմանյան բանակները կգրավեն Բալկանյան թերակղզին, կջախջախեն բուլղարական և սերբական քրիստոնեից տերությունները, կգրավեն Կոստանդնոպոլիսը և Վիեննան տասնամյակներով կպահեն պաշարման մեջ, եվրոպացիները կհասկանան, թե ինչպիսի երկնահաս աղետ բերեցին իրենց գլխին, խորտակելով Բյուզանդական հզորությունը: Սակայն 1204 թ. նրանք դեռևս հիացած էին Կոստանդնոպոլսից թալանված և Եվրոպա բերված մասունքներով ու հարստություններով, որոնք ավազակային ու նենգ հարձակման արդյունքը էին: Փաստենք, որ հինգ խոշոր խաչակրաց արշավանքների արդյունքը մեծ չէր, վերջին հաշվով մոտ հարյուր տարվա Երուսաղեմի քրիստոնեից թագավորության ստեղծում, մերձափնյա սիրիական նեղիկ հատվածի պահպանում և ծանրագույն հետեանքներ 1187 թ. Երուսաղեմի սալլահեղինյան նվաճումից հետո, բոլոր խաչակրաց ամրությունների և իշխանության հետքերի ոչնչացում մինչև 1291 թ., ինչպես և ծանրագույն հետեանքներ տեղի քրիստոնեից պետությունների համար: Նշենք, որ իսլամի և քրիստոնեության միջև փոխադարձ դաժանությամբ սոսկալի ալիք բարձրացավ այն բանից հետո, երբ իսլամական զորքը դաժան հաշվեհարդար տեսավ առաջին անկանոն զորամիավորումների հետ, որոնք տեղ էին հասել մերձավոր արևելք և դրան հաջորդած Երուսաղեմի գրավման ժամանակ խաչակիրների կողմից դրսեորդած պատասխան դաժանության հետեանքով (Երուսաղեմում անխնա ոչնչացվեցին այնտեղ բնակվող իսլամադավանները և հրեաները): Փաստենք, որ հինգ խաչակրաց խոշոր արշավանքներին հաջորդել են ևս մի շարք արշավանքներ, որոնց ազդեցությունը մերձավոր արևելյան տարածաշրջանում ըստ էության ոչինչ էր: 1228 թ. Գրիգոր VII պապի և սրբազն Հռոմեական կայսրության կը կայսր Ֆրիդրիխի միջև ծագած սուր կոնֆլիկտը վերջին հաշվով ավարտվեց Գրիգոր VII -ի հաղթանակով, որին հաջողվեց ստիպել Ֆրիդրիխին գլխավորել VI խաչակրաց արշավանքը: Բանակի սիրիական ափը իջնելուն պես Դամասկոսի սուլթան Ալմուազան Խսան քանդեց քաղաքի պարիսպները և հեռացավ իր հետ տանելով ողջ իսլամական բնակչությանը և համարելով, որ քաղաքն այլևս որեւէ ստրատեգիական դերակատարություն չունի: Պայմանավորվածությունների գալով Եգիպտոսի սուլթան Ալ Քամիլի հետ, որ «...կնքվեց զինադադարի պայմանագիր տասը տարով: Քրիստոնյաներին վերադարձվում էին Երուսաղեմը, Բեթղեհեմը և Նազարեթը, սակայն Ֆրիդրիխը պարտավորվեց չվերականգնել Երուսաղեմի պատերը:

Հրեաները պետք է թողնեին քաղաքը, բայց իսլամադավաններին էր մնում Խարամը...»<sup>1</sup>:

Պայմանականորեն ասած սա Երուսաղեմի վերջին գրավումն էր քրիստոնյաների կողմից և մի վերջին անգամ քրիստոնեից տարրի բնակվումը Երուսաղեմում «Քաղաքը մնաց քրիստոնյաների ձեռքում մինչև 1244 թ., երբ այն գրավվեց և ոչնչացվեց Խորեզմի թուրքերի բանակի կողմից, ովքեր փրկվել էին իրենց միջինասիական տարածքները կատարված մոնղոլական արշավանքից»<sup>2</sup>:

Ընդհանրացնելով երկու ցիվիլիզացիաների բախման այս պատմական հատվածը նշենք, որ այն ոչ միայն առաջացրեց չմարող թշնամանք և ագրեսիվ դիրքորոշում միմյանց հանդեպ կողմերի միջև, այլև սկիզբ դրեց միմյանց ավելի խոր ուսումնասիրելու և ճանաչելու գործընթացին: Իսլամը ծանոթացավ արևմտյան քրիստոնեից բանակների հատկական զինավառությանը (նոր տեսակի թաղիքե զրահներ, ասպետական շերտազրահներ և այլն), մարտավարությանը և ուզմավարությանը (ֆորտիֆիկացիոն շինարարություն, պաշտպանական ամրոցային բնագծերի ստեղծում, մարտի ժամանակ ծանրազեն հեծելակի կիրառում): Քրիստոնյաները իրենց համար բացահայտեցին արևելքը իր գիտությամբ, գեղագիտական ընկալումներով և ուղղակի ծանոթացան իսլամական ջիհադին (զազավաթ), որպես կրոնական գիտակցության գաղափարաբանական ուղղորդում՝ միտված հասարակության ողջ պոտենցիալի կենտրոնացմանը և ուղղորդմանը դեպի ուազմական նպատակների իրականացում:

Նշենք, որ խաչակրաց անհաջողությունների հիմքում ընկած էին ոչ միայն կոմունիկացիաների աներևակայելի ձգվածությունը, որը օպերատիվ արձագանքման որևէ հնարավորություն չէր տալիս, այլ նաև Հռոմի պապի կողմից գործող բանակների վրայից վերահսկողությունը կորցնելը: Ինչի հետևանքով, քրիստոնեից զինված զանգվածը շատ դեպքերում գլխավորում էին ավագակաբարու և համակարգված գործողություններին դեմ, միայն սեփական շահերը որոնող անհատներ: Նշենք, որ արշավանքի նպատակային խնդիրների լուծման մեջ Եվրոպան միասնական չէր և անգամ կարող էր որոշ գործիչների մոտ ի հայտ գալ հոռմեական եկեղեցում հակադիր կողմնորոշում: Փաստենք, որ արևմտյան քրիստոնեության միակ իրական նվաճումը խաչակրաց արշավանքների արդյունքում միջերկրածովյան կղզիների գրավումն էր (Սիցիլիա, Սարդինիա, Էլբա, Կրետե, Կիպրոս): Ստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող այս կղզի-

<sup>1</sup> Karen Armstrong, Jerusalem: one city three faiths, New York, 1996, p. 302.

<sup>2</sup> Ռոլլին Արմյուր, Իսլամ և քրիստոնություն, Մ. , 2004, ս. 169.

ների ճնշող մեծամասնությունը արևմուտքին հաջողվեց պահպանել ամեն գնով, անդամ օսմանյան թուրքական կայսերապետության փառքի և հզորության գագաթնակետում գտնվելու շրջանում։ Վերը բերված գործընթացներին Զուգահեռ Եվրոպայում ընթանում էր նոր այսպես կոչված, նախավերածննդյան ժամանակաշրջան, որը վերջին հաշվով իրենով պետք է պայմանավորեր նոր որակական հատկանիշներով՝ հասարակության ծնունդ։ Որքան էլ զարմանալի չհնչի՝ առաջին կայձը և յուրօրինակ սկիզբը այս գործընթացի դարձավ Խսպանիայում քրիստոնյաների կողմից Տոլեդոյի (նախկին վեստ գոթական պետության մայրաքաղաքի) վերանվաճումը։ Այստեղ քրիստոնյաները հայտնաբերեցին հարուստ գրադարաններ, որոնց պահպատճերում հայտնաբերվեցին խոշորագույն հույն փիլիսոփաների, հատկապես՝ Արիստոտելի աշխատությունները արաբերենով։ Քանի որ Խսպանիան որպես իսլամի դեմ պայքարի գլխավոր ուղղություններից մեկը գտնվում էր ուշագրության կենտրոնում և Տոլեդոն նվաճող բանակը ինտերնացիոնալ էր, հայտնաբերված իմաստնության գանձերի հանդեպ աժիոտաժը բերեց նրան, որ Տոլեդո եկան բոլոր եվրոպական երկրներից հոգևոր-գիտական գործիչներ և հույն փիլիսոփաների աշխատությունները արագ թարգմանվեցին և դարձան գաղափարական գարգացման օրակարգային խնդիրներից մեկը, որի ներազդեցության ներքո փոխվեց նաև մարդ Աստված հարաբերությունների ընկալումը։ Արիստոտելյան գաղափարները ծնեցին նոր հարցեր, որոնք քրիստոնեաց կաթոլիկ եկեղեցու որոշ ճշմարտություններ դնում էին հարցականի տակ։ Այս ծագած հակասությունները առաջացրեցին արիստոտելյան փիլիփոփայության հանդեպ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության թշնամական վերաբերմունքը։ Հակադրություն, որը իր բացառիկ աշխատանքի միջոցով կարողացավ հաղթահարել Թովմա Աքվինացին։ Նշենք, որ արիստոտելյան փիլիսոփայության մեկնաբանության մեջ իր «Summa Theologica» աշխատության մեջ նա, փաստորեն, վերանայում է հարյուրամյակներ Եվրոպայում գերիշխած Օգոստինոս Երանելու մոտեցումը մարդ - Աստված հարաբերությունների։ Վերջինս համարում էր, որ մարդն իր կամքով և բանականությամբ կարող է բարին գործել միայն Աստծու ողորմածությամբ։ Ճշմարտությանը ևս մարդկային բանականությունը կարող է հասու լինել միայն Աստծո ողորմածությամբ, իսկ «մաքուր մարդկային կողմը»՝ մարմինը, զգացմունքները և գիտակցությունը լավագույն դեպքում շարժիչ ուժ են, այլ ոչ թե բարու և ճշմարտության աղբյուր, իսկ վատագույն դեպքում՝ արգելապատճեն այդ արժեքներին հասնելու ճանապարհին»<sup>1</sup>։ Թովմա Աքվինացին, ի

<sup>1</sup> Религиозные традиции мира, М., 1996, ст. 387

Հակաղրություն վերը նշվածի, որի հիմքում հոգեսորի և մարմնավորի կոչտ հակաղրությունն էր, առաջ քաշեց այն գաղափարը, որ այդ սկիզբները փոխկապակցված են միմյանց հետ և որ գիտելիքը ստեղծվում է ոչ թե Աստծո հայտնության արդյունքում, այլ զգայական փորձից, որին հաջորդում են դատողությունները, որոնք հենված են մարդկային բանականության վրա: Այս ճանապարհով է անցնում մարդկային բանականությունը բարձրագույն ճշմարտությունների հասնելու համար: Մարդ - Աստված հարաբերություններում այս արմատական ընկալման փոփոխությունը բացեց լայնածավալ հորիզոններ ոչ միայն կրոնական ընկալումների ոլորտում, այլև համընդհանուր ձգտում հանդեպ նոր գիտական նվաճումները: Այս էական հասարակական գործընթացի արդյունքում ի հայտ եկան եվրոպական ամենաառաջին համալսարանները, սկիզբ դրվեց քննախույզ մտքի ազատ կողմնորոշմանը և նոր սոցիալ տնտեսական համակարգի ձևավորման սաղմերին:

Փաստենք, որ Եվրոպա մայրցամաքի համար արևմտյան քրիստոնեությանը յուրօրինակ այլընտրանք հանդիսացող կրոնական զորեղ շարժումներ միջնադարի այս հատվածում դեռևս չկան, բացառությամբ բոգումիլների շարժմանը, որը մուտք էր գործել դեռևս X դարում Բյուզանդիայից և հանդիսանում էր Բյուզանդական կայսրության ներսում տեղ գտած պավլիկյանների և մանիքեականների կրոնական համակարգերի խառնուրդը: Վերջիններս կտրականապես մերժում էին Հին Կտակարանը բացի Սաղմոսաց գրքից և համարում էին, որ Հիսուս Քրիստոսի երկրային կյանքը ընդամենը զանգվածային տեսիլք է եղել՝ զուրկ նյութական կրողից: Այս աշխարհը, ըստ այդ ուսմունքի, արարված է չար աստծո կողմից և մարդկային նյութական մարմինը ևս նրա ծնունդն է, իսկ գերագույն նպատակը հոգու մեջ անթեղված հուսո տարրերը, որոնք բարու՝ լույսի Աստծուց են հետմահու պետք է վերականգնվեն, մաքրվեն և վերադառնան իրենց Տիրոջ մոտ: Այս համակարգը էապես տարբերվում էր կայացած քրիստոնեական համակարգից, քանի որ մերժում էր նաև խորհուրդները, բացի՝ ձեռնադրությունից: Զնայած այն բանին, որ կրոնական ուղղության հիմնական տարածման շրջանը Բալկանյան թերակղզին էր, սակայն մեծ արագությամբ այն XI դ. տարածվեց Խոհեմայի Հյուսիսում, Ֆրանսիայի հարավարևելյան հատվածում և կենտրոնական Եվրոպայում՝ Մորավիայում և Հարակից տարածքներում: Քրիստոնեական եկեղեցու, ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան թեկի ճնշման ներքո խիստ միջոցառումներ ձեռք առնվեցին այս կրոնական հոսանքը Եվրոպական հողից արմատախիլ անելու համար: Շարժման ղեկավարը 1110 թ. Կոստանդնոպոլսում խարույկ բարձրացվեց, խստագույն ճնշումներ կիրառվեցին բոգոմիլների հանդեպ:

Սերբիայում 1180 թ. և Բուլղարիայում՝ 1211 թ.: Նշենք, որ մոնղոլ թաթարական արշավանքների ժամանակ Հունգարիան ճանաչեց բոգոմիլների ուսմունքը, որպես պետական կրոն: Սակայն կատարների շարժման ջախ-ջախումից՝ թուրքերի կողմից 1463 թ. Բունիայի և 1482 թ. Հերցեգովինայի թուրքական նվաճումից հետո «...ոչ մի հետք...չմնաց Բալկաններում, թերևս բացի գերեզմանաքարերից, որոնք զարդարված էին սիմվոլիկ դեկորացիա-ներով...»<sup>1</sup>: Նշենք, որ քրիստոնեության ներսում այսպիսի այլընտրանքա-յին ուսմունքի կողմից բնակչության զգալի քանակությամբ զանգվածի սեփական ազդեցության տակ գցելը խոսում է այն մասին, որ ապագա ռե-ֆորմացիոն շարժումները պատմական հարթակ են դուրս եկել նախապես ձևավորված որոշակի նպաստավոր դասավորության պայմաններում:

XII դարը Եվրոպական հողի վրա խոչորագույն հասարակական տնտե-սական անցումների ժամանակաշրջան էր, այն պայմանականորեն անվա-նում էին հասուն միջնադարի գագաթնակետ, թերևս այս ժամանակաշր-ջանն է, որ իր յուրահատկություններով, աննախադեպ տնտեսական և գի-տամշակութային անցումներով սկիզբ դրեց նոր մտածողության և նոր ժա-մանակների: Այս շրջանում տեղի ունեցավ աննախադեպ համալսարանա-կան աճ, իսկ առաջատար համալսարանները՝ Բոլոնիա, Օքսֆորդ, Սորբոն, զգալի չափով ազատվեցին եկեղեցական վերահսկողությունից: Եկեղեցու և իշխանության սերտաճումը հասավ իր գագաթնակետին ու կրոնականի և աշխարհիկի տարանջատումը դարձավ հրամայական ժամանակների հա-մար: Դրամաշրջանառությունը քրիստոնեից Եվրոպայով մեկ դարձավ գե-րինտենսիվ համեմատած նախորդ ժամանակների հետ: Ազատ առեւտրի մի-ջոցով շահերի փոխափանցումը զարկ տվեց նոր քաղաքների և նոր կրթա-կան հաստատությունների աճին. «...ինչը հնարավոր դարձրեց մեծ շի-նությունների կառուցումը, ինչպես և զորեղ ինտերնացիոնալ շարժումնե-րի ի հայտ գալը»<sup>2</sup>: Հասարակական առումով այս ամենը նպաստեց սոցիա-լական ավելի խիստ տարանջատմանը և որպես հասարակություն կայուն հենքի ստեղծմանը, որը բաղկացած էր ազնվականությունից, հոգևոր դա-սից, ասպետական դասից, քաղաքաբնակ զանգվածից և գյուղացիությու-նից: Վերը նշված խավերի և դասակարգերի ձևավորումը ենթադրում էր ավանդական դարձած հոգևորականություն և իշխանություն հարաբե-րությունների վերանայում: Ընդհանրական գնահատականով «քաղա-քակալիքությունը, որում նախաձեռնությունն ու իշխանությունը այդքան մեծ չափով գտնվում էին կղերականության ձեռքին, փոխում էր իր բնու-

<sup>1</sup> The Oxford Dictionary of the Christian Church, London, 1974, p. 184.

<sup>2</sup> The Oxford Illustrated History of Christianity, Edited by John McManners, Oxford, New York, 1995, p. 200.

թագիրը, որակները և էությունը»<sup>1</sup>: Ստեղծված նոր իրավիճակում ի հայտ էին գալիս լուրջ հակասություններ միապետական իշխանությունների, որոնք ձգտում էին մաքսիմալ անկախության և Հռոմի պապի միջև, որը ձգտում էր իր իշխանության վերահսկողության ներքո պահել միապետական իշխանությունները: Այս շահերի հակադրության պայմաններում հնարավորություն էր բացվում տեղական կրթական հաստատությունների ներկայացուցիչների համար իրականացնել պապական համակարգի անսքող քննադատություն: Այս առումով առաջին դիրքերում էր Անգլիան, որը ուներ պապականության հետ առնակատման ամենահին ավանդույթներից մեկը՝ գեռևս արդի Անգլիայի հիմնադիր Վիլհելմ Նվաճողը հասավ այն բանին, որ անգլիական բարձրաստիճան հոգևորականների պաշտոններին նշանակում է անձամբ միապետը, որը ստանում է Հռոմի պապի համաձայնությունը: 1370-ական թթ. հայտնի անգլիացի փիլիսոփա և աստվածաբան Ջոն Վիլկիֆը, անխնա քննադատության ենթարկեց պապականությունը, հայտարարելով, որ քրիստոնյա հավատացյալի համար գլխավոր և անվիճելի հեղինակությունը Աստվածաշունչն է, իսկ Աստվածաշնչով ոչ միայն հնարավոր չէ հիմնավորել Հռոմի քրիստոնեից եկեղեցու նվիրապետական կարգը, ինչպես և շատ թույլ հաստատում ունի Հռոմեական եկեղեցու եկեղեցիների գլուխ հանդիսանալու համոզմունքը, քանի որ ըստ հեղինակի, եթե առաքելականությունն է այդպիսի կրոնական աթոռների միջև ստեղծված դիսպոզիցիայի պատճառը, ապա երուսաղեմի պատրիարքությունը շատ ավելի առաքելական հիմքեր ունի, քան Հռոմը: 1380-ական թթ. Ջոն Ուիլկիֆը սուր քննադատության ենթարկեց Հաղորդության մասին տրանսուբստանցիայի ուսմունքը, որի համաձայն հավատացյալը պետք է զգա, որ ճաշակում է Հիսուս Քրիստոսի իրական մարմինն ու արյունը: Դրա փոխարեն նա կոչ էր անում «...զարկ տալ հաղորդության բարոյական և հոգևոր կողմին»<sup>2</sup>: Այս քննադատությունը բացահայտ խզում և առնակատում էր պապականության հետ, սակայն անգամ այսպիսի ծայրահեղ հակադրության պայմաններում անգլիական իշխանությունները հեղինակին չհանձնեցին պապական լեգատների ձեռքը, այլ ընդամենը սահմանափակվեցին նրանով, որ կրծատեցին նրա բուհական շփման շրջանակը: Փաստենք, որ Ուիլկիֆը իր հայացքները հրապարակում էր ինչպես լատիներեն աշխատությունների տեսքով, այնպես էլ անգլերեն աշխարհաբարով, ինչը նպաստեց նրա հայացքների ժողովրդայնացմանը

<sup>1</sup> The Oxford Illustrated History of Christianity, Edited by John McManners, Oxford, New York, 1995, p. 229

<sup>2</sup> The Oxford Illustrated History of Christianity, Edited by John McManners, Oxford, New York, 1995, p. 1503

լայն շրջանակում: Նա ունեցավ ինչպես անգլիացի աշակերտներ, այնպես էլ արտերկրյա գործիչներ, որոնք ներազդվեցին նրա հայացքներից: Այդպիսիներից մեկն էլ Յան Հուս էր, ով 1400-ական թվ. բարձրացրեց Ուկիֆի վեր հանած խնդիրները եվրոպական թատերաբեմում: Լինելով Պրագայի համալսարանում, նախ ընտրվելով փիլիսոփայության ֆակուլտետի դեկան 1401 թ., ապա 1409 թ. դարձավ ռեկտոր, թարգմանեց և հրապարակեց Զոն Ուիկլիֆի Տրիոլոգիան, ինչպես և իր գործերում սուր քննադատության ենթարկեց եկեղեցու սեփականության իրավունքը, սեփականության իրավունքն ընդհանրապես, ինչպես և հասարակության հիերարխիական կառուցվածքը, որը գոյություն ուներ: Ալեքսանդր V և Գրիգոր XII պապերի հակազդեցությունը հանգեցրեց նրան, որ չեխ ժողովուրդը ճնշող մեծամասնությամբ անցավ Յան Հուսի կողմը և միապետական դեկրետով 1409 թ. հունվարի 18-ին Պրագայի համալսարանը դրվեց չեխերի կառավարման տակ: Նորընտերի Հովհան ԽIII պապը 1411 թ. օտարեց Հուսին, ով ստիպված եղավ լքել Պրագան, որից հետո տեղի ունեցան երկու համաժողովներ, որոնք միտված էին «Հաստատելու խաղաղություն»: Այստեղ Հոսը ներկայացավ իր De Ecelesia աշխատանքով 1413 թ., որտեղ առաջին տասը գլուխները ուղղակի վերառված էին Ուիկլիֆի աշխատություններից: Հրավեր ստանալով մասնակցել պապի կողմից ծրագրված կաթոլիկ համաժողովին, որը պետք է քննարկեր Հուսի բարձրացրած հարցերը ևս և ստանալով սրբազն Հոռոմեական կայսրության կայսր Սիգիզմունդի հավաստումը այն մասին, որ նա կապահովի Հուսի անվտանգությունը, վերջինս մեկնեց Կոնստանցա, որտեղ, նենգաբար ձերբակալվելով, 1415 թ. հուլիսի 6-ին Հրկիզվեց խարույկի վրա: Նրա դեմ տեղ գտած այս աղաղակող անարդարացիությունը ապստամբության բռնկման պատճառ դարձավ Զեխիայում, որը բազում դաժան ճակատամարտերից հետո Յան Ժիշկայի գլխավորությամբ հաղթեց սրբազն Հոռոմեական կայսրության բանակներին: Եվ փաստորեն ռեֆորմացիոն շարժման առաջին բաստիոնը դարձավ եվրոպական Հողի վրա: